



524

L. V. 3





A GOOD
ADVERTISING
MEDIUM

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ
THE CITIZEN

THE ONLY
ARMENIAN
PAPER
Published in
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 1.

ՖԲԷՉՆՕ . ԲԱԼ . ՕԳՈՍՏՈՍ 16, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆՏ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ք

—Ֆրէզնոյի Հայ քաղաքական Ակումբը ընդհանուր ժողով ունեցաւ Յուլի 26ի երեկոյին Ֆ. Հ. Գ. Միւթեան ժողովարարին մէջ, նոր պաշտօնէից ընտրութիւն կատարելու համար: Կանխաւ պատրաստուած ընտրելիներու ցանկի մը վրայ գաղտնի քուէարկութիւն կատարելով Ատենապետ ընտրուեցաւ Տ. Յ. Մ. Սերոբեան, փոխ Ատենապետ՝ Տ. Սեբէմեան, Ատենադպիր՝ Հ. Էկինեան, փոխ Ատենադպիր՝ Տ. Մ. Ալէմեան, Գանձապետ՝ Տ. Գ. Մ. Սերոբեան, Գործադիր Ժողովոյ անդամ՝ Տիարք Տ. Քթ. Ղազարեան, Տ. Քթ. Բարսեղեան, Յակոբ Քէշիշեան, Կիրակոս Յովհաննէսեան և Ս. Վ. Միլքոնեան:

—Օգոստոս 1ին Պ. Լեոն Նշիկեան, քաղաքիս Հայ Ըսբօսլին անցեալ չրճանի ամենայաջող ընթացաւարտներէն մէկն՝ ուշիմ և աշխատասէր պատանի մը՝ գեղերի կատարմամբ Սան Ֆրանսիսկօ մեկնեցաւ իւր մօրը՝ Տիկին Գ. Նշիկեանի հետ, անկէ Նազանգայի՝ Համալսարանը մտնելու համար: Նոյն երեկոյ բարեկամներու կողմէ եղած ողջերթի բարեմաղթութեանց ի պատասխանի քանի մը խօսքերով իւր շնորհակալութիւնը յայտնեց պատանի ճամբորդը, և խոստացաւ ջանադիր ըլլալ իրականացնելու այն յոյսերը որոնք կը դրուէին իր վրայ:

—Արժ. Տէր ՍաՀակ վարդապետ Նազարեթեանի ջանիք և իւր մասնաւոր հրաւիրանք Ֆ. Հ. Գ. Միւթեանը, որ մէկ ու կէս տարիէ ի վեր քայքայեալ վիճակի մը մէջ կը գտնուէր, Ընդհ. Ժողով մը ունեցաւ Յուլի 29ի երեկոյին իր սեպհական սրահին մէջ ի ներկայութեան երեսուն անդամոց, ու յաջողեցաւ վերակազմուիլ և նոր պաշտօնեաներ ընտրել գաղտնի քուէարկութեամբ: Հակառակ շատերու գուշակութեան թէ անհատական ինքիւրներն ու հին կոիւններու ազդեցութիւնը դեռ անհետացած չըլլալով այս ժողովն ալ փոթորկալից ու անյաջող պիտի ըլլար, շնորհիւ հաշտարար վարդապետին ամեն ինչ խաղաղութեամբ անցաւ: Միւթեան նորընտիր պաշտօնեաներն են. Պ. Կիրակոս Յովհաննէսեան՝ Ատենապետ, Պ. Յարթ Նշիկեան՝ փոխ Ատենապետ, Պ. Մ. Ալէմեան՝

Ատենադպիր. Տիարք Յակոբ Եանըզեան, Յ. Ասլանեան, Պ. Գազրիմանեան, Ն. Ստեփանեան, Յ. Նաճարեան, Յ. Վարդանեան և Յ. Թայեան՝ Գործադիր Ժողովոյ անդամներ: Ժողովոյ փակումէն առաջ յօտնկայս շնորհակալութիւն յայտնուեցաւ ՍաՀակ վարդապետին որ յաջողած էր կանգնել Միւթեանը:

—Քաղաքիս Հայոց նորակազմ Նուագածուաց Խումբը փառաւոր հանդէս մը տուաւ Յուլի 31ի երեկոյին Ֆ. Հ. Գ. Միւթեան Սրահին մէջ 25 սէնթ մուտքով: Օղի տաքութեան և եղանակի անյարմարութեան պատճառաւ ակնկալուածին չափ մեծ բազմութիւն մը ներկայ գտնուած չէր: Բոլոր ծախքերը գոցելէ զատ 20 Տոլարի չափ շահ մնաց խմբին: Բացի նուագածութիւններէ, երգերէ և զաւեշտներէ Բժշկի Ծառային կատակերգութիւնը անդի ունեցաւ: Հանդէսին նախագահեց Տ. Ա. Սեբէմեան:

—Ուրախութեամբ կը լսենք թէ Ֆ. Հ. Գ. Միւթեան սրահի շէնքին վրայ ծանրացած Հին պարտքը 100 տոլարի իջած է, որոյ փոխարէն Միւթեանը 75 տոլարի չափ գանձելի ապագիկներ ունի:

—Մօրնինկ Բըվըպիւբըն րազրին լուր տրուած է թէ Հայ Քաղաքական Ակումբին մէջ անհամաձայնութիւն կը տիրէ եղեր, և թէ վերջերս կատարուած ընտրութիւններն մեծ զժգոհութիւն յառաջբերած են հակառակ կուսակցութեան մէջ. ևն: Այս լուրերն ի հարկէ անհիմն են բոլորովին և այն աղբիւրը ուսկէ քաղուած են ասոնք՝ ուրիշ բան մը կարելի չէ անուանել՝ եթէ ոչ, Ստուծեան Բերան:

—Սընտէյ Միլըրը շաբաթաթերթը, որ Հայոց դէմ միշտ հակառակութիւն մը ունեցած է իր սիւներուն մէջ, Հայոց Քաղ. Ակումբի մէջ տեղի ունեցած երեւակայական բաժանումը ծանուցանելով զայն մատի փաթթոց ըրած էր անցեալները: Միլըրը, որ բան գործ ըրած է իրեն՝ ումեն խմբի, պաշտօնէի կամ անհատի վրայ խօսած ժամանակ յարձակիլ անխտիր, հեգնական կերպով կըսէ այս առթիւ թէ Հայ քաղաքական կազմակերպութեան մը պէտք չի կայ եղեր, որովհետեւ ինքը պէտք չի տեսներ Ռուս, Գերման, Իտալացի ևն նոյնատեսակ խումբերու: Ի՞նչ յոռի տրամաբանութիւն: Ո՞վ կըսէ թէ պէտք չի կայ այդպիսի քաղաքական կազմակերպութիւններու, որով միայն կարելի է օտարականներն՝ իրենց մայրենի լեզուով տեղւոյս քաղաքական կեանքին ընտելացնել: Եթէ

ուրիշ ազգութիւններ իրենց ակումբները չունին՝ պատճառը սա է թէ տակաւին հասած չեն այն աստիճանին որուն հասած է հայ գաղութը: Եւ երբ ժամանակը գայ, Միրըր՝ ցաւ ի սիրտ պիտի գտնէ հոս գեռ շատ ուրիշ քաղաքական ակումբներ, ինչպէս որ կան արեւելեան մեծ քաղաքներու մէջ: Արդ Միրըր շատ լաւ կընէր եթէ նախ իր սրտին պատկերը տեսնէր իրեն թերթին՝ —Արեւիկայի հայերին— մէջ ժողովրդի մը վրայ յանիրաւի անդրադառնալէ առաջ:

—Քաղաքիս ազգայիններէն Պ. Սեդրակ Մարտիան օրերս երկու խիստ օգտակար գիւտեր ըրած ու ետկուքի համար ալ դիմում ըրած է Ուաշինկիթըն փաթէնթի իրաւունք ստանալու համար: Այս գիւտերուն երկուքըն ալ այդպէս անհետ կ'ընթացնէր եւ երկրագործներու համար աւագ կարեւորութիւն ունեցող գործիներ են, որք տարակույս չունինք թէ մեծ ընդունե ութիւն պիտի գտնեն հասարակութենէն երբ որ սպարակ ելին ի վաճառ: Գիւտերուն առաջինն է — Կուլթ Տրայլըր — անուն գործի մը որոյ միջոցաւ անձրեւի կամ փոթորկի ատեն այդիններու մէջ գրուած հազարաւոր շամիչ պարունակող թւերէնները կընան պաշտպանուիլ ծածկոցներու ներքեւ, կարճ ժամանակամիջոցի մէջ: Գիտնալ հարկ է թէ ներկայ դրութեամբ շամիչները պաշտպանելու համար այդ հազարաւոր թրէյները հարկ էր մէկիկ մէկիկ իրարու վրայ դիպել, մեծ աշխատութեամբ: Եւ աւելորդ է ըսել թէ՛ այդ օրինակ պարագաներու մէջ շատ անգամ երկրագործք մեծ վնասներու կենթարկուէին յանկարծական անձրեւներու բռնակերպ: Ծրութ Տրայլըրի միջոցաւ սակայն, մէկը կընայ ակնթարթի մը մէջ ծածկել կամ բանալ 50 է մինչև 75 թրէյ ձեռքի թէթեւ շարժմամբ մը միայն. մինչ հին դրութեամբ, բազմաթիւ գործաւորներու երկարապատում աշխատութեան հարկ կար այս գործողութիւնը կատարելու համար: Երկրորդ գիւտը պտուղ հաւաքելու գործի մէջ, — Ծրութ Փլէքըր — անունով: Երկրագործները պտուղը հաւաքելու համար՝ ներկայ դրութեամբ՝ ծառը կը թօթուեն ու փոր ինչ կամ պտուղները մէկիկ մէկիկ հաւաքելով յատուկ սընտուկներու մէջ կը լեցնեն, որոնցմէ շատեր կը վնասուին և շատեր ալ ստքի կոխան կը գտնան. բաց սատի, շատ անգամ բուսական աշխատաւոր գանելը անկարելի լինելով ահապին քանակութեամբ պտուղ կը փտտէր ծառերուն վրայ: Ծրութ փլէքըրը այս դժուարութեանց և վնասներու առջև ստանելու նպատակաւ հնարուած է, և փտտէ հենք՝ թէ պիտի կընայ իր նպատակին ծառայել: Այս գործին մեծ հոփանցի մը ձեն ունի երկու անջատ կտորներէ բաղկացեալ, ուր ծառի մը բունին շուրջը կը բոլորեն ու մեծ վրան մը կը կաղմեն ճիւղերուն ներքեւ, որոց մէջ ինչ կամ պտուղները յատուկ ծակերէ անցնելով կը հաւաքուին սնտուկներուն մէջ, անանկ որ երկու աշխատաւոր Ծրութ փլէքըրով մը կընան տասը գործաւորի գործ տեսնել՝ առանց մէկ պտուղ կորսնցնելու:

Յաջողութիւն կը մտղթենք հնարողէս երիտասարդին և կը յուսանք որ իւր գիւտերը շահաբեր կ'ըլլան իրեն և պատուաբեր Հայ անուան:

—Քաղաքիս Հայոց տնայ մէջ իսօք կը շրջի թէ՛ կարգ մը մարդիկ գաղանի կերպիւ կաշխատին եզեր կախաղանէն ազատել Տիգրան Մանուկեան անուն Արարկերցի երիտասարդը, որ անցեալ Յուլիս 4 ի երեկոյեան, տարձանակի երկու հարուածներով սպաննեց Տէր Միքայէլեան անուն անձը և մահացու կերպով վիրաւորեց Պ. Յ. Ռատիկեանը: Այս անտեղի ատրամայնութիւններն պատճառ առած են հակառակ կողմին՝ քաղաքիս կարող փաստարաններէն երկուքը վարձել, ընդհանուր գատարակին իբր օգնական, ամբաստանեալը՝ որ աւելորդ է ըսել թէ բանալին մէջ կ'ապասէ իր գատատանին, անխուսափելի մահուան գատարակութեամբ առաւ միակ նպատակաւ: Ետտ ցաւայի երեւոյթներ են ստանք. նախ, սրովհետեւ գանձելու չէ և կը հաւատանք թէ չի կայ քաղաքիս Հայոց մէջ մէկը՝ որ խորհի յանցաւորի մը պաշտպան կանգնել, գայն օրինաց ու արդարութեան ձեռքէն ազատելու համար, և հաւատարակս մեղաւոր են անանք որք մասնաւոր ջանք մը կ'ընեն անպատճառ կախաղան բարձրացնել մէկը, հոգ չէ եթէ օրէնքը աւելի մեղմ պատիժ մը արտադրել ուզէ՝ անոր յանցանքին համեմատ: Ժողովուրդը իւր մէջ հարկ չի կայ իրաւու գէմ բաժնի այս պայանութեան գործին առթիւ: Իսկ այս անտեղի տարածայնութիւնները հանող մարդիկ քիչ մը խելճ և քիչ մ'ալ մարդկութիւն ունենալու են: Քանի որ ամբաստանեալը ոչ մի սղգական ունի այս քաղաքին մէջ, ոչ գրամ և ոչ ալ գործնական պաշտպաններ, անպիտութիւն է՝ գաղանի նպատակի համար՝ տարածայնութիւններ հանել ժողովրդեան մէջ և զրգուել հակառակ կողմը անտեղի քայլեր առնելու և ամբաստանելոյն առջև եղած ծանր գատը աւելի և աւելի ծանրացնելու ջանալ. թող ստու է որ օրէնքը իր ընթացքը առնէ ու արժանաւոր կերպիւ պատժէ յանցաւորը՝ արդարութեան որոշած չափով:

—Յարութիւն Ռատիկեան՝ Տիգրան Մանուկեանի ծանրապէս վիրաւորած երիտասարդը երկու շարժառաջ հիւանդանոցէն ելաւ, և գրեթէ բոլորովին ապաքինեալ՝ օգտիրութեան գնաց Սան Ծրանիսիւ: Վէրքին թողուցած հետքերը գրեթէ անտեսանելի են, մինակ ձախ կողմի ակումներէն մի քանին թափած ըլլալով՝ քիչ մը փոփոխութիւն յատաճ կը բերէ իւր նախկին երեւոյթին վրայ, և այս կընայ ի հարկէ գորմանուիլ շատ գիւրին կերպով:

—Պ. Յ. Փափազեան Օգոստոս 5 ին քաղաքիս բարձրագոյն գատարանին կողմէ վարիչ (սամինիթրէյթր) կարգուեցաւ հանգուցեալ Յակոբ Մահալուպեանի ստացուածոց: Մահալուպեան որ քանի մը շարժներ առաջ մեռաւ, իր սղջութեան ժամանակ՝ սովորութիւն ունէր իր բոլոր հաշիւներն ու դրամները Յ. Փափազեանի քով պահել, և որուն աշխատաւորներէն մէկը եղած էր երկար տեսնէ ի վեր:

—Կըսուի թէ Ղինաստանցի գործաւորներ այս տարի բաւական մեծ թուով չի պիտի գան Ծրէգնօ այգիկութի ժամանակ այգիներու մէջ գործելու համար:

և հետևաբար գործաւորի մեծ նուազութիւն մը պիտի ախրէ յատաճիկայ Սեպտեմբերին: Տեղացի Չիներ կը սեն եղբի թէ անցելոյն մէջ գաւառիս հարկահաւաքները շատ նեղութիւն տուած ըլլալով իրենց հայրենակցաց՝ այս տարի որոշած են ուրիշ կողմեր երթալ գործել փոխանակ Տրէզնօ գալու: Հայ այգեպանքը ժամանակին իրենց կարգադրութիւնը ընելու են այս մասին, վերջէն նեղը չի մնալու համար:

—Խօսք կայ թէ այս տարի Տրէզնայէն մեծ քանակութեամբ թուզ պիտի արտադրուի ուրիշ տարիներու բազմաամամբ, և գիներն ալ գոհացուցիչ պիտի ըլլան: Վերջերս թուզ գնալ նոր տուն մ'ալ հաստատուեցաւ քաղաքիս մէջ, որն որ հուանական է թէ մրցումը քիչ մ'աւելի ընէ գնողներու մէջ: Մարդարեան ընկերութեան մէկ անդամը՝ տեղական թերթերու միջոցաւ կը ծանուցանէ՝ թէ ասկէ ետքը մեծ պէտք չի կայ թուզը ծծմբել, լատ որում թէ պտուղը բաց գոյն մը կ'առնէ և թէ անախորժ համ մը. և կը հըրաւանագէ երկրագործներն, մանաւանդ իրենց յաճախորդներն, ծծումբ չի գործածել, ասկէ ետքը յիշեալ պտուղին համար:

—Ֆ. Հ. Գ. Միութեան Նորընտիր Գործադիր ժողովը անցեալ Արտակի օր իր առաջին նիստն ունեցաւ Միութեան սրահին մէջ ու իր պաշտօնեաները ընտրեց հետևեալ կերպիւ. Ասենապետ՝ Յ. Վարդանեան, Ատենադպիր՝ Յ. Ասլանեան. Գանձապետ՝ Յակոբ Եսնըզեան: Հին պաշտօնեաները ինչպէս նաև Գանձապետը իրենց հաշիւներն ու թուղթերը յանձնեցին նոր պաշտօնէից:

—Քարճրագոյն դատարանի հրամանաւ Գ. Մ. Միքայելեան, Ճէյն Ֆ. Զապլը և Սեդրակ Ճօրճ, Տեղբան Մանուկեանի կողմէ Բուլիս Կին սպանուած Տ. Միքայելեանի ստացուածքներուն արժէքը որոշած ըլլալով Օգոստոս 7 ին գոյն Քարճրագոյն Գատարանին հաղորդեցին ի գիտութիւն: Այս պատրաստուած ցուցակին նայելով սպաննուածին բոլոր ունեցածը կարժէ 958 տուար 49 սէնթ, որ կը բաղկանայ 106 տուար 95 սէնթ կանխիկ դրամէ և անոր խանութին մէջ գանուած բոլոր ապրանսոց ընթացիկ արժէքէն: Ա. Ծովիկեան, որ Միքայելեանի կողմէ՝ անոր մահուան անկողնոյն մէջ եղած կտակին կտակակատարն կարգուած էր, և որուն այս պաշտօնը վաւերական նկատուած էր Քարճրագոյն դատարանի կողմէ, գիմած և հրաման ինդրած է նոյն Գատարանէն յիշեալ սպարանքները վաճառելու, պարտքերը վճարելու և աւելցած դրամը հանգուցելոյն փոփաքին համաձայն՝ ղրկելու անոր հօրը՝ Տ. Միքայել քահանային ի Հիւսէյնիկ:

—Պի Նէլըր անուն մէկը անցեալներն իւր հինցած կօշիկները կարկատել տալու համար Յ. Ազատեանի խանութը կերթայ ու կօշիկներն հոն թողլով կը մեկնի, քիչ ատենէն վերջ գալ զայն ստանալու համար: Սակայն վերադարձին՝ արքած վիճակի մը մէջ՝ տեսնելով թէ ստանամներն տակաւին նորոգուած չէին, կսկսի ավիճարնիլ: Ազատեան տեսնելով թէ խնդիրը պիտի

ծանրանայ՝ խանութէն դուրս կը վռնտէ այս յաճախորդը և պատիկ կուր մը տեղի ունենայէ վերջ Պի կը ձերբակալուի, հասարակաց խաղաղութիւնը վրդոված ըլլալու մբաստանութեամբ. և դատուելով հինգ Տուար տուգանքի կը դատապարտուի:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Քիչերու միայն սրուած է թագաւոր ըլլալ, բայց ամէն անհատ կրնայ ազնուական մը դառնալ:

—Բաղդաւորութիւնը խենթի մը ձեռքին մէջ ամենամեծ դժբաղդութիւնն է:

—Դեռ աշխարհի վրայ յաջող մէկը չի տեսնուեցաւ առանց թշնամիի:

—Այն մարդն որուն կեանքը կնոջ մը ազդեցութիւնը չէ կրած՝ քիչ նշանակութիւն ունի աշխարհի մէջ:

—Մեղմ պատասխանը սուր լեզուն կը փթացնէ խկոյն:

—Պատիկ ձուկերը խորունկ ջուրերու մէջ չեն կըրնար լողանալ:

—Բնութիւնը կը ծիծաղի այն մարդուն վրայ, որ կը ջանայ հակառակի իրեն:

—Մարդս կը մեռնի, բայց իր ազդեցութիւնը՝ բարի կամ չար՝ կապրի յաւիտեան:

—Մարդուն մէկը որ միլիօնատէր էր երբեմն, խենթեցաւ յանկարծ տարիներ առաջ. վերջերս երբ խելօքցաւ նորէն, գտաւ ինքզինքը յետին աղքատութեան մէջ. հիմա կ'ողորայ թէ ինչո՞ւ չի մնաց իր վերջի երջանիկ վիճակին մէջ:

—Անոնք որ հրճուանաց ետէէ են կը կորսնցունեն շատ անգամ յաջողութեան ուղին:

Նա—Կը հաւատա՞ թէ տգիտութիւնը երջանկութիւն է:
Նէ—Չիյտեմ, բայց կը տեսնեմ թէ դու երջանիկ ես:

Քալիֆօրնիա երթա՞նք

—Ինչո՞ւ Մագերուն համար "Արևելքի իմաստունները" ըսուեցաւ:

—Որովհետև Արևելուք ճամբորդեցին:

Հրէյի սղան—Հայր, դժոխքը պիտի վառի՞ միշտ:
Հայրը—Այո՞, սղաս:
Տղան—Ուրեմն ստտանան ի՞նչպէս պիտի կրնայ կըրակի սպահովագրութիւնը գանձել:

Մայրը—Չէ, սղաս, Մեծն Աղեքսանդր կնիկ չէր:

Տղան—Բայց նայէ ի՞նչ կը գրէ հօս. "Աղեքսանդր լացաւ, որովհետև ալ ուրիշ երկիր մը չի կար որուն աշխարհակալէր": Ինձ կը թուի որ՝ եթէ էրիկ մարդ մ'ըլար՝ պիտի հայհոյէր:

Ա. Օրիորդը—Լսեցի՞ր Անթառամի նշանի մատանիին նկատմամբ եղած խօսքերը:

Բ. Օրիորդը—Չէ, բայց երանի՛ էր թէ ես մասն ունենայի անոր մէջ:

—Աշխարհիս ամենէն հետաքրքրաշարժ լրագիրը Աթէնքի մէջ կը հրատարակուի: Այս թերթը ծայրէ ի ծայր, ծանուցումներն անգամ, ոտանաւոր կը խմբագրուի:

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի թիւ 1033
ձէՑ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար

Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սէնթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ

Բաժանորդացիներ կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ զրամ կը զրկուին խմբագրութեան հետեւեայ հասցէի:

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ. ՕԳՈՍՏՈՍ 16, 1902

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ֆրէզնոյի մէջ Հայերէն թերթ մը հրատարակելու պէտքը զգալի եղած էր ոչ միայն Հայոց կողմէ, այլ տեղացիներէն անոնք որ մօտէն գիտէին Հայերը Տիւրքիէի բացատրութեան համեմատ, կը զարմանային ցարդ մեր այս մասին ցոյց տուած անարբերութեան համար, վասնզի Հայերը ճանչցուած էին ասանցմէ իբր Ասիայի Անկիո-Մաքսոն ցեղը որ իր գնացած տեղը իւր Եկեղեցին ու մամուլը միասին կը տանի:

Այս պէտքը լեցնելու նպատակաւ երկար ատենէ ի վեր կը ջանայինք պարբերական հրատարակութիւն մը սկսիլ՝ հակառակ սա իրողութեան՝ թէ Ամերիկայի մէջ քանի մը Հայերէն թերթեր կը հրատարակուէին արդէն. բայց ի հարկէ այս թերթերը չէին կրնար տեղական պէտքերը լեցնել քաղաքիս Հայոց, սրոյ թիւը օրէ օր աճելու վրայ էր զգալի կեպով: Խոստովանելու ենք սակայն թէ տակաւին այն գիրքին մէջ չենք որ կարողանանք տեղական բոլոր պէտքերուն համապատասխանող թերթ մը հրապարակ բերել. բայց նկատելով որ գաւառական ընդհանուր ընտրութիւնները տեղիպիտի ունենան քանի մը ամիսէն, և նկատելով թէ այս պարագաներու սակ հայ թերթի մը գոյութիւնը կեն-

սական կարևորութիւն ունի, այս անհրաժեշտ պէտքը լեցնելու նպատակաւ կըսկսինք այսօր ՔԱՂԱՔԱՑԻՆ հրատարակել սահմանափակ յատուկագծով մը, յառաջիկայ տարեգլխին թողլով այն կարգադրութիւններն ընել որք կարևոր են թերթիս ամեն մասամբ իր բաղձալի կողման բարձրացնելու համար:

Ուստի ՔԱՂԱՔԱՑԻՆ պիտի ըլլայ ամեն բանէ առաջ տեղական շաբաթաթերթ մը որ պիտի աշխատի հայ քաղաքացիները արթուն պահել, զգացունելով տնտեսց իրենց քուէին զօրութիւնը և զայն արժանաւժայի կերպիւ գործածելու մեծ պարտականութիւնը: Պիտի սոյ ընտրական լուրերը. մատնանիշ պիտի ընէ նահանգիս, քաղաքիս, ինչպէս նաև Հայոց շահերուն համար ամենէ օգտակար նկատուած ընտրելիները, ու ջատագով պիտի հանդիսանայ անոնց ընտրութեան համար:

ՔԱՂԱՔԱՑԻՆ իր զօրութեան չափով պաշտպան պիտի հանդիսանայ Հայոց իրաւունքներուն: Աշխարհը պիտի հսկէ տեղական մամուլի մէջ երբեմն երբեմն երևան եկող Հայոց աննպատակ ու անուանարկիչ հրատարակութիւններուն, պատասխանելով անոնց երբեմն իւր եւ երբեմն տեղական թերթերու միջոցաւ: Պիտի հաղորդէ նաև, տեղացի ծանօթ օրէնսգէտներէ զրուած յատուկ յօդուածներով ծանօթութիւններ տեղական կամ ընդհանուր այնպիսի օրէնքներու և կանոններու վրայ զորս գիտնալ կարևոր է ամեն քաղաքացիի ինչպէս նաև ամեն Հայու համար: Շաբաթաթերթիս պիտի սոյ տեղական այն ամեն լուրերը որոնք կրնան հետաքրքրել իր ընթերցողները, մասնաւոր ուշադրութիւն գարձնելով տեղական ազգային լուրերու, զորս հաւաքելու համար կամաւոր աշխատակիցներու օգնութեան կարօտը պիտի զգայ միշտ:

Շաբաթաթերթիս խմբագրութիւնը մասնաւոր հօգ պիտի տանի տեղական հայ ազգային գործոց, որոնց զարկ մը տալու համար ոչ մի ջանք պիտի խնայուի թերթիս կողմէն:

ՔԱՂԱՔԱՑԻՆ թէև ռամկավարական վարդապետութեանց կը հետևի, բայց տեղական գործոց մէջ երկրին ու հայ ժողովրդին շահը կուսակցական ամեն նկատուածներէ բարձր պիտի պահէ միշտ:

Կրօնական ինքիւրներու մէջ ՔԱՂԱՔԱՑԻՆ ձեռնպահ պիտի մնայ միշտ, լսի լուրերն հաղորդել բաւական տեղերով ամէն պարագայի մէջ: Լրագրիս խմբագիրը հայ կուսակցական ինքիւրներու մէջ իւր անձնական համալուծներն ունենալով հանդերձ՝ բնաւ չի պիտի փորձէ իւր թերթը նոյն վարդապետութեանց պաշտօնական բերանը ընել, այլ պիտի բաւականանայ լուրերն հաղորդել, անաչառութեամբ վարուելով հայ կուսակցութեանց ու կուսակցականներու հետ:

Հաստատուն կերպով համոզուած ըլլալով թէ անձնական նեղ հաշիւներ և անհատական ինքիւրներն ընդհանրական գործոց մէջ աւերում գործող ամենամեծ պարագաներն են, ՔԱՂԱՔԱՑԻՆ հաստատաբար կը ծանուցանէ թէ պիտի յարգէ ամէն մարդու անհատական իրաւունքներն, անձեռնմխելի պատիւն ու ա-

զատութիւնը, երբ ստիպուի անհատական լուրեր տալ կամ իր կողմանէ գիտողութիւն մը ընել այդ մասին: Վնասակար անձնական ու անտեղի վիճարանութիւնք թոյլ չի պիտի տանք որ արձագանգ գտնեն թերթիս մէջ:

Պիտի աշխատինք տալ երբեմն գիտական, առողջապահական, գրական և ուրիշ շինիչ յօդուածներ. եթէ թերթին ստանալիք ընդունելութիւնը բաւական ըլլայ այս ամենն անպատկեր համար:

Աւելորդ է թերևս ըսել թէ՛ ՔԱՂԱՔԱՅԻՆ մեծ պէաք ունի ամէն անոնց անկացութեան ու բարոյական օգնութեան՝ որք կարող են օգնել իրեն, ու հայ հասարակութեան համակրանայ և քաջալերին՝ օգտակար ըլլալու և իւր կոչման կրնալ ծառայելու համար:

Այս թերթ տարեկան բաժանորդագիրն չի պիտի ընդունի առայժմ: Բայց բաժանորդագրուել փոփոխողները պիտի կրնան զայն ընդունել մինչև տարեգրուի 75 ականթի փոխարէն:

Մեր ընդհանուր ուղղութիւնը սա քանի մը խօսքերով գծելէ վերջ՝ կը վստահացնենք հասարակութիւնը՝ թէ խմբագրութիւնս պիտի աշխատի գծուած ուղղութեան հողունք և տասին հաւատարիմ մնալ:

ՃՕՐՃ ՊՐԱՏԸՐՄ

ՀԱԿՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.

1109 ձէճ փողոց, —Ֆիւք Պլաք— Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ուսյթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց ստեղծողներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատարար՝ ուրիշներէ բնաւ սուրբերութիւն չունին:

Կը փոփոխինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք զուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ՃՕՐՃ ԵՂՐԱՅՐՆԵՐԷՆ:

Ֆ Ր Է Ձ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

Գ Ր Ա Ս Ե Ն Ե Ա Կ ՈՒ Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ե Ղ Ի Ն Ա Յ Կ Վ Է Ն Թ ՈՒ Բ Ա Փ Ո Ղ Ո Յ Ն Ե Ր ՈՒ Ա Ն Կ Ի Ի Ն Ը
Թէլէֆօն — — — Մէյն 24
ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ.

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿ ՄԸ

—Կրնա՞ս 45 թուէն 45 հանել և 45 մնացորդ ունենալ: Մի կարծեր թէ անկարելի է. մի քիչ խորհել հարկ է միայն ինդիքը լուծելու համար. ահա թէ ինչպէս կ'ըլլայ. 9 էն մինչև 1 թուանշանները շարէ իրարու քով ուղիղ գծի մը վրայ. ստոնց ստիկ 1 թուանշանէն սկսեալ մինչև 9 թուանշանը զիւր նոյն կարգաւ, և բարձման գործողութիւնը կատարէ սովորական կերպով: Գիտելի է թէ խրաքանչիւր կարգի թիւերը գումարելով 45 կ'ունենանք, հետևաբար, 45ը 45 էն հանելով 45 մնացորդ կը մնայ:

Օրինակ.

9 8 7 6 5 4 3 2 1 որ հաւասար է 45ի
— 1 2 3 4 5 6 7 8 9 որ հաւասար է 45ի

8 6 4 1 9 7 5 3 2 որ հաւասար է 45ի

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ի

—Խորէն Բատիկոնն որ քանի շարաթներէ ի վեր անկողնոյ կը ծառայէր Փլուրբուի Հիւանդութեամբ, անցեալ շարաթ երեկոյ, ժամը 8 ին, մահկանացուն կընքեց իր ծնողաց տան մէջ 28 տարեկան հասակին մէջ: Խորէն բնիկ Բաղէշցի երիտասարդ մէր, որ իր մանկութեան ժամանակ Ամերիկա եկած էր իր ծնողաց հետ: Ի բնէ գծագրութեան յարմարութիւն ունեցած ըլլալով՝ այն ճիւղին հետամտած ու յաջող գծագիր մը եղած էր Խորէն Ֆրէզնոյի մէջ, ուր սակայն ասպարէզը շատ նեղ գտնելով, իրր չորս տարի առաջ Ս. Ֆրանսիսկօ գնացած էր աւելի ընդարձակ ասպարէզի մը մէջ յառաջագիմելու համար: Հոն հանգուցեալը յաջողած էր արդարն. ծանօթ ու պատուաբեր դիրք մը բռնել օրաթերթերու, հանդէսներու և գրքերու համար բաղմաթիւ պատկերներ գծելով: Իրր մէկ ու կէս ամիս առաջ Խորէն կը հիւանդանայ, բժիշկներն տեսնելով թէ հիւանդութիւնը կը ծանրանար օրէ օր, կը խրատեն զինքը Ֆրէզնօ գալ իր ծնողաց քով: Հոս հիւանդը սկսաւ ապաքինելու նշաններ տալ սուջի օրեր, բայց վերջերս հիւանդութիւնը ծանրացաւ ու անակնկալ մահը վրայ եկաւ անցեալ Շարաթ երեկոյին:

Հանգուցիւր յաղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ անցեալ Կիրակի օր Երեցական Հայոց եկեղեցոյն մէջ ուր խուռն բազմութիւն մը ներկայ էր իւր յարգանքը մատուցանելու տարաբաղդ երիտասարդին: Գամբանականներ խօսեցան Արթ. Տ. Ահարոն Վարդապետ, Պատ. Խ. Պէննէեան, Տքթ. Մէլքոնեան և Պատ. Կիրակոս Յովհաննէսեան: Թաղումը տեղի ունեցաւ կէս օրէ վերջ ժամը 4 ին Հայոց գերեզմանատան մէջ:

ՄԻ ՎՀԱՍԻՐ

Թէ գրպանդ գրամ չունիս,
Հանդերձներդ ալ պատուած,
Յրտին՝ տաքին դէմ անպաշտպան,
Անբարեկամ՝ մոռցուած,

Մի՛ վհատիր, դու մարդ ծնար,
Արժան եղիր քու անուան.
Նեղութիւնը իր վերջն ունի,
Յաւիտեանս չերթար ան:

Թէ մահիճդ հողն է խոնաւ,
Վերմակդ՝ ամպեր երկնընթաց,
Քարայր մ'է քեզ պատասպարան,
Հողն՝ անկողին, քարը՝ բարձ.

Մի՛ վհատիր. քաջի մը պէս
Տոկա՛, փորձէ՛. դու մարդ ես.
Վստահ կերպով վճռէ՛, կրկնէ՛
"Պիտի կանգնիմ օր մը ես":

Նեղութիւնը վերջ մ'ունի. հոս
Երևոյթ մ'է ամեն բան.
Ինչ ալ ըլլայ ներկայ դիրքդ
Մինչ յաւիտեան չերթար ան:

Մի՛ վհատիր, տրտում մ'ըլար,
Յուսա՛, գործէ ծաղրերես.
Վստահութեամբ ըսէ՛ "Օր մը
Պիտի կանգնիմ օտքի ես":

Թէ օրն ի բուն դու չարչարուիս,
Ուրիշները քու քրտանց
Արդիւնք խին, ապրին փարթամ,
Դիզեն գրամ առատ գանձ,

Մի՛ վհատիր, գործէ, յուսա.
Դու Աստուծոյ շունչն ունիս.
Վստահ ըսէ՛ "Օր մը անշուշտ
Պիտի չի զրկեն մարդիկ զիս":

Եթէ անգործ գոնէ ի դուռ
Աշխատութեան ի ինդիր
Մինչ երեկոյ շրջիս յոգնած
Վաստակարեկ, ի նանիր,

Տոկա՛ ջանա վստահ եղիր
Թէ անիւր մեր բազդին
Օր մը շարժդ սփռէ պիտի
Վարդեր սողին ու անդին:

Թէ քեզ կոչեն դատարկապարտ,
Ծաղրեն վիճակդ անյաջող,
Եւ կամ մարդիկ քեզ նկատեն
Ծոյլ, անճարակ, անկա ող,

Մի՛ վհատիր, յուսա, գործէ,
Դու Աստուծոյ դէմք ունիս.
Վստահ կերպով ըսէ՛ "Օր մը
Խարդիկ պիտի յարգեն զիս":

Թէ սիրածդ քեզ ուրանայ՝
Մարդիկ զքեզ ծաղր ընեն,
Թէ սէրն անօր քեզ տարապիր
Վտարէ իսկ քու տնէն,

Մի՛ վհատիր, համբերէ միշտ.
Անկեղծ սէրը մահ չունի.
Յուսա, ըսէ թէ "Օր մ'անշուշտ
Պիտի շահիմ ես զԱնի":

Երբ կը տեսնես Թուրքի շղթայն
Կը կաշկանդէ քեզ գերի,
Իրաւունքէդ կը զրկուի
Տառապանօք անթերի.

Մի՛ վհատիր. Հայ քաջաց հետ
Զէնք առ կուսէ, դու Հայ ես.
Գերութիւնն ալ իր վերջն ունի
Ազգի մ'համար Հայուն պէս:

Եւ երբ տեսնես Հայրենիքդ
Թուրքին գերի, չունի զէնք,
Հայաստանը՝ արեան աշխարհ,
Աւեր ամեն սուն ու շէնք,

Մի՛, բարեկամ, մի՛ վհատիր.
Կեանքդ ուխտէ մարդու պէս.
Երգմամբ ըսէ՛ "Հայաստանս
Պիտի փրկեմ օր մը ես":

Հ. Է.

ԱԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻԻՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը
ունիս, կամ եթէ կը փափաքիս Թուրքիա կամ այլ-
ուր երթալ, թիքէթի համար գիտէ Սըթրըն Փըսիֆիք
ընկերութեան օֆիսը: Ամերիկայի ուէէ մէկ կէտին
համար սոմս կը վաճառէ միլենոյն ընկերութիւնը: Ա-
ւելի տեղեկութեանց համար գիտել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ
Տիվիթըն Փատինճըր Լյճընթ: Սիթի Թիքէթ Էյճընթ
Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃէՅ Փողոց,
Նոր Փաթըրըն Պլաքին սոջի

ՍԵՐՈՒԲԵԱՆ ԵՂԲԱՐԻՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

Թ Ո Ւ Զ Ի , Դ Ե Ղ Զ Ի Ո Ւ Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ

Զ Ո Ր Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր Ո Ւ :

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ

Ամեն անոնք՝ որք կը փափաքին Վենետիկ տպուած
որ և է գիրք ստանալ, կրնան զայնս ձեռք բերել խրմ-
բազրութեան միջոցաւ, որ նոյն Միաբանութեան գոր-
ծակալ կարգուած է:

Ը Ն Տ Ր Ա Կ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

—Յառաջիկայ Նոյեմբեր և ի ընդհանուր ընտրութեանց ժամանակ պիտի ընտրուին հետևեալ պաշտօնեւորները:

Governor, Lieutenant-Governor, Secretary of State, State Controller, State Treasurer, Attorney-General, Clerk of the Supreme Court, Superintendent of Public Instruction, Superintendent of State Printing, one Chief Justice of the Supreme Court of the State of California, two Associate Justices of the Supreme Court of the State of California, one Representative to the Congress of the United States from the Sixth Congressional District, one member of the State Board of Equalization from the Fourth Equalization District, one Railroad Commissioner from the Third Railroad District of the State of California, one member of the State Senate from the Twenty-sixth Senatorial District, member of the State Assembly from the Sixtieth Assembly District, one member of the State Assembly from the Sixty-first Assembly District; also the following county offices of the county of Fresno, State of California:

Sheriff, District Attorney, County Clerk, Auditor, Assessor, Tax Collector, Recorder, Treasurer, Superintendent of Schools, Surveyor, Public Administrator, Coroner, one Supervisor from the First Supervisorial District, one Supervisor from the Fourth Supervisorial District, one Justice of the Peace in and for the Third Judicial Township of the County of Fresno, State of California, and two Constables in and for the Third Judicial Township of the County of Fresno, State of California.

—Շարժուս մէջ բոլոր քաղաքական կուսակցութիւնները իրենց նախնական ընտրութիւնները ունեցան քաղաքիս ու գաւառիս բոլոր ստորաբաժանումներու մէջ, ու պատգամաւորներ ընտրեցին՝ գաւառական պաշտօնեւորներ համար ընտրելիաց ցանկ պատրաստելու պաշտօնով: Ընտրուեցան նաև պատգամաւորներ այն ընդհանուր նախնական ժողովին համար որ պիտի գումարուի ի Վաքրասէնթօ նախնական պաշտօնեւորներ համար ընտրելիներ որոշելու նպատակու:

—Նախնադիս, ինչպէս նաև Ֆրէզնոյի Հասարակապետականները իրենք իրենց մէջ երկուքի բաժնուած են այս տարիս Այս բաժանումներու մին—Կէյճեան—կաշխատի նախնական կէյճը ընտրելի ընել այս տարի իր այժմեան պաշտօնին, իսկ հակառակ կողմը՝ Հակա-Կէյճեաններ յանջապա հակառակ են ներկայ Նախնական պապիին շատ մը պատճառներու համար, որոց մինսա է թէ Նախնական պապիին հակառակ իր երգման ու խոստման, պաշտօնի անցած օրէն ի վեր գործիք գարցած է Սըրըն Փըրիֆիք Ընկերութեան և կարգ մը քաղաքական վաս մեքենայութեանց հեղինակներու խմբին: Եթէ Հասարակապետականք շարունակեն այս

ԹՐԷՅՁ ՓԷՅՓԸՐԻ ՀԱՄԱՐ

ՍԻՄԷՆԹՈՎ ՊԱՏԱԾ ԳԱՄԻ ՈՒ ՀԱՐՏՈՒԷՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ

ԹԷԼԷՅՈՆ

ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ.

Էքոչէնչ — Թիւ 2

պէս զբաղի ներքին կոնքերով, անդին Ռամկապարականք կը խին զիւրութեամբ բոլոր պաշտօններն նախնական ամէն կողմերը:

—Հայ Հասարակապետականները, որչափ որ կարողացած ենք ստուգել, Նախնական կէյճի հակառակ կուսակցութեան կը վերաբերին, որոց նախնական ընտրելին Մ. Ֆրէնթը եղած լինել կը թուի:

Ս. Ա. ՇՈՒԱՅՁԸՐ,

ՀԱՐՆԷՍ, ԹԱՄԲ, ՄՏՐԱԿ, ԾԱԾԿՈՅՆԵՐ, ԵՆ.

Ամեն տեսակ Նորագումներ կըլլան փութով:

1920 Միարկոպա Ըսթրիթ, Ֆրէզնո:

—Ամբաստանեալ, ըստ Գատաւոր անցեալ օր, գու յանցաւոր գանուած ես կոյր ձեանալով փողոցներուն մէջ անցորդներէն զրամ ստացած ըլլալու համար իր սղորմութիւն, մինչդեռ ինծի շափ լաւ կըրնաս տեսնել: Պատիժդ է երեք ամիս բանտարկութիւն գաւառական բանտին մէջ:

—Այս ի՞նչ տարօրինակ վճիռ է, Տէր գատաւոր, առաջին անգամն է կը լսեմ որ մէկը տեսնել կրցած ըլլալուն համար բանտ կը զրկուի:

Գառան—Տէր խմբագիր, Մարկոպա աղբարք եկած գուրսը կ'սպասէ բարկացած:

Խմբագիրը—Ի՞նչ կուզէ:

Գառան—Կրտէ թէ ներս գալուն պէս՝ քեզ պիտի սպաննէ երկի յօլուածին համար:

Խմբագիրը—Գնա՛ Մարկոպին ըսէ թէ, իր կարգին սպասելու շափ քաղաքավարութիւն գիտնալու է, զեռ իրմէ առջը ութը հոգիներ կան սպասող:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ

Յառաջիկայ Կիրակի, 17 Օգոստոս, Ազգային Եկեղեցւոյ մէջ Ժամերգութիւնք կսկսին ժամը 9.30 ին. Քարոյի ժամն է 11: Նիւթն է՝ "Մարդկային Ընկերութիւնը և Մեր Հայրերը":

Երեկոյեան ժամը 3 ին Կոկի Կիրակիներէն զատ, նիւթ ունենալով՝ "Կիրակի և Տօն օրերու պաշտամունք և Եկեղեցական կարգ ու օրէնք Հայաստանեայց Եկեղեցւոյ":

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

—Քաղաքապետ Բոթիֆրնո շարժուածէջ Ֆրէզնոյի ծանօթ ստաղձավաճառ Ֆ. Ք. Փրէսքըթը անդամ կարգեց Փօլիս էնա Ֆայր Բոմիչներու Պօրտին՝ լեցնելու համար ճօրճ Հ. Մընրոյի բաց մնացած աթոռը որ հրատարեցաւ վերջերս: Մ. Փրէսքըթ, որ վալի Լըմպըր Բըմբնիի գրուին է այժմ, այս կարևոր պաշտօնին ամենայարմար անձը կը նկատուի թէ՛ ժողովրդէն և թէ՛ մահոյ կողմէն ընդհանրապէս: Մր. Փրէսքըթ Հասարակապետական մէ, մինչ քաղաքի Քաղաքապետը Ռամկավարական կուսակցութեան կը վերաբերի:

—Յովհաննէս Շարճեան, որ Բոթաքըթընի Տէյրի Բէքըրա լրագրի տպարանին մէջ կազմարար մէ, անցեալները քանի մը օր Ֆրէզնո այցելելէ յետոյ վերադարձին՝ յիշեալ թերթի վերջին թիւերու մէկին մէջ ընդարձակ "տեսակցութիւն" մը կը հրատարակէ և Ֆրէզնոյի տաքը, աւազն ու փոշին անտանելի կը նշկատէ, բազմատեղով դանձաբ Երուսաղէմի տաքին, Երիզատտի տօթին ու փոշիներուն հետ: Այսպիսի նկարագրութիւններ դուր չեն գար Ֆրէզնոյի ժողովրդեան. մանաւանդ չափաշանցութիւնները սկներէ! են Պ. Շարճեանի պատմածներուն մէջ: Քաղաքի Բըժըրլիքընի ծանօթ աշխատակիցներէն՝ Աքըրմըն անցեալ Կիրակի աւուր թուին մէջ երկար յօդուածով մը կը պատասխանէ Շարճեանի՝ անոր ըսածները ծանրապէս ջախջախելով:

—Ութըրի Հայ Աւետարանականաց քարոզիչ պատուելի Խ. Պէննէհան՝ որ իւր ընտանեօք Արևմուտք եկած էր օգափոխութեան համար՝ հարուսային Քալիֆորնիայէ Ֆրէզնո եկաւ անցեալներն, ասիէ քանի մը օրէն ուղղակի իր պաշտօնատեղին երթալու համար:

—Անցեալ Երեքշաբթի օր քաղաքս եկաւ, այցելութեան համար, Նիւ Եօրքի Հայ ստամեարոյթ Տքթ. Յ. Թօփրահանեան, որ քիչ մը ժամանակ իր ծնողաց մօտ անցունելէ յետոյ պիտի դառնայ Արևելք:

—Բնթերցողք գիտեն թերևս թէ Նազանգապետ Կէյճի և Սան Ֆրանսիսկօ Քօլ լրագրի տիրոջ ու տեսչի միջև մեծ հակառակութիւն կը տիրէր երկար տակնէ հետէ: Քօլ՝ Նազանգապետը ամբաստանած էր այլ և այլ ամբաստանութիւններով, որոց համար Նազանգապետը պատուոյ դատ բացած էր լրագրին դէմ:

Արսէն Յ. Եսմիրգեանի (ՎԱԼԻ—ՍԱՅՔԼՐԻ)

Թիւ 2114 ՅՐԷՋՆՕ ԸՍԹՐԻԹ, ԹԵԼԷՅԹՆ, ՈՒԱՅԹ 717 Կը վաճառէ ՏԷՅԹՐԸՆ անուն համբաւաւոր հիծելանիւր գիրքամատչելի պայմաններով: ՄԱՄՆԱԳԷՏ Նորոգիչ ամէն տեսակ հեծելանիւր: Գեռ ոչ մի յաճախորդ զժգոհ չէ մեկնած այս խանութէն: Փորձ մը պիտի համոզէ Ձեզ: Մանաւոր ուղադրութիւն Հայ յաճախորդաց:

Մինչ այս դատ դատարաններու և փաստարաններու ձեռքին մէջ օրուան տաք ինդիլը եղած էր, մանաւանդ այս ընտրութեանց օրերուն մէջ Նազանգապետ Կէյճ անդիլէն նամակ մը կը հրատարակէ՝ ծանրապէս ամբաստանելով Քօլի Տէրը՝ Մր. Բօփրիքը և Վարիչը՝ Մր. Լիք: Ասանք այ անցեալ օր Ս. Ֆրանսիսկոյի եղեռական ատենանէն հրամանագիր մը տուին Նազանգապետի ձերբակալութեան համար: Այս սողեր գըլուած տակն թէ և ամբաստանեալը ձերբակալուած չէր տակաւին, բայց ամէն բոպէ անոր ձերբակալուելու լուրը կսպասուի ամեն կողմէ:

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Զ ՈՒ Ր Ը ՅՐԷՋՆՈՅԻՆՆ Է

** ՓՈՐՁԵՅԷՔ ԶԱՅՆ ԵՒ ՀԱՄՈՉՈՒԵՅԷՔ: **

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ 1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ Մեծաքանակ Վաճառականք Նափայի, Սընօմայի ևն. գիւններու, տեղական և ներածեալ օղիներու: ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ Բումաթիզով ապահով գեղ ճառեցուած ՈՒԻԹՐՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Ըուրերուն: —Թէլէֆօն, Ուայթ 817:—

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՅԻԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցեսամն, նամակագրութիւն, պաշարան, հարսանեկան ծանուցագիր և տեսարակներ. գազացուցիչ գներով:

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ Տօրսիյ Բապիւնըն Ընկ. Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

ՏՔՐ. Յ. Ղազարեան,

Ա Տ Ա Մ Ն Ա Գ Ո Ր Ծ ԵՒ Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ Զանա Պաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ. Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գոհացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր: Թէլէֆօն — — — — Ուայթ 231